

ՅԵՔՍՈԹԻՐԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՆ ՄԻՏՔԸ

ԳԱՐԵԳԻՆ ԶԱՐԲՀԱՆԱԼՅԱՆԸ ՇԵՔՍՊԻՐԻ ՄԱՍԻՆ

Այս հարցը նոր է արծարծվում, բայց հարցի ատաղձը կապված չէ ինչ-որ մի նորագյուտ վավերականի հետ։ Վավերագրի հայտնաբերում, որոշ պայմանականությամբ ասած, կատարել ենք, սակայն հայտնաբերվածները բավականին զիջում են իրենց գրական-շեքսպիրագիտական կշռով այն ժամանակում նյութին, որ և՛ կար, և՛ չկար։ Կար, որովհետև տպագրված էր գրեթե մեկ դար առաջ՝ Գկար, որովհետև ոչ ոք ջանք չէր արել պրատելու, շոշափելու այդ նյութերը իրեւ խիստ ուշագրավ փաստեր, իրեւ հայ շեքսպիրագիտության մի արժեքավոր ավանդ, որ գալիս է այն ժամանակից, երբ ձեւագործում էր մեր շեքսպիրագիտական միտքը։ Եթե ինդրին մոտենանք գրական-պատմական շափանիշով, ապա պիտի շեշտենք, որ ժամանակին, մի քանի տողանոց շեքսպիրածոն գրաբար զեղումների կողքին, Գարեգին Զարբհանալյանի արածը մի նշանավոր գործ էր։

1853 թվականին Աղամյանի Պոլսո ուսուցիչ Գ. Զարբհանալյանը հրապարակել է Շեքսպիրին նվիրված անստորագիր երկու հոդված։ Դրանք հետագայում դարձան իր շարադրած արևմտաեվոպական գրականության պատմության Շեքսպիրին նվիրված բաժնի հենքը։

Նախ մի քանի խոսք Զարբհանալյանի կենսագրական ու գրական վաստակից, ապա կանցնենք բուն նյութին։

Ինչպես նշեցինք, Զարբհանալյանը (նաև Սահակյան) պոլսեցի է, ծնվել է 1827 թվականին։ Տակավին տասնամյա մանուկ, նրան հանձնում են Միհիթարյան միաբանությանը։ Ուսման ընթացքն ավարտելուց հետո 1850 թվականին ուսուցիչ է կարգվում նույն վանքում։ Այնուհետև ծննդավայրում ուսուցչություն է անում մի տասնամյակ՝ 1858—1868 թվականներին։ Միհաբանությունում վարում է զանազան պաշտոններ՝ տպարանապետ, վերակացու, հյուրընկալ։ Եվ գրեթե քսան տարի (1876—1894) միհաբանության քարտուղարն է լինում։

Ալցել է Գրիմ, Փարիզ՝ ապօպտուտ մշակութային-կրթական խնդիր-ներով, Վախճանվել է 1901 թվականին:

Զարբհանալլանն աշքի է ընկել ծայրահեղ համեստությամբ: Խնչպիս վկայել է «Բազմավիճակ» մահախոսականի մեջ, հիվանդ ժամանակ նա խնդրել է ոչինչ չըրել իր մասին: Կենդանի ժամանակ էլ ուժից հակառակած է անունն զրոշմելու իր զանազան հեղինակությանց և թարգմանությանց վրա»: Մավալուն հոգվածները շարունակ ապվել են առանց անվան հիշատակության, իսկ գրքերի ճակատին անունը բնալ չի գրել Երկհատորանոց աշխատությունների միայն առաջին զրքի ներածության վերջում զրել է «Հ. Գար.», որ նշանակում է «Հայր Գարեգին Զարբհանալլան»: Երկրորդ հատորներն այդ էլ չունեն, բոլորովին անստորագիր են, անանոն: Այդպես էլ գործել է ավելի քան կես զար: Ստացած շբանշանները և մեծարժեք նվերները մահվանից հետո խցում զանում են «Ճաճկված և նետված մի անհշան խորչի մեջ»:

Այս է կյանքը

Ահա և վաստակը. Զարբհանալլանը հայ իրականության մեջ առաջին դեմքն էր, որը ավել հայ գրականության և օտար մատենագրության բազմահատոր պատմության զրքեր՝ հենված ապագիր և ձեռողիր հարցուրափոր աղբյուրների վրա: 1856 թվականին լույս տեսավ նրա «Պատմութիւն մատենագրութեան լունաց, հոռվմացիցոց և հարց եկեղեցույա պատկանելի ուսումնասիրությունը» (շուրջ 850 էշ), Գրքի նյութը հունահումեական գրականությունն է: Հեղինակը աշխատանքը ծրագրել և զլուի է բերել մեծ ընդգրկմամբ: Հին աշխարհի գրականության պատմությունը լրացնում են նոր հատորներ: 1847 թվականին լույս է տեսել «Պատմություն մատենագրության միջին և նոր դարուց հարեմուսա երկհատորյակը» (գրեթե հազար էշ): Դժվար չէ պատկերացնել, թե ինչքան նորություններ էին բերում այդ գրքերը, որ խոսում էին Հոմերոսից, Դանթեից, Գյութեից, Շիլերից, Շեքսպիրից, Ռասինից, Բայրոնից, Վոլտերից, Բալլակից, հայությանը հաղորդակից դարձնում օտար ապգերի գրականության կանոնավոր պատմությանը:

Նույն կերպ, բայց ավելի լայն ծավալով գրականագետը ստեղծում է հայ գրականության պատմությունը: 1865-ին լույս է ընծալում «Պատմութիւն հայերեն դպրութեան» աշխատության առաջին հատորը (650 էշ), ապա նոր գրականությանը նվիրված երկրորդ հատորը՝ 1878-ին: Մի քանի անգամ ապագրությունը է ուսումնասիրությունը, որը, առանձնապես հին գրականության հետ կապված մասը, բանասիրական ծանրակշիռ

գործ է: 1916-ին կեռն նրան համարել է «Հայոց գրականության պատմության մինչև այժմ էլ եղակի մասնագետ և հեղինակ»: Զարբհանալյանի մահվան առթիվ Ս. Մալխասյանը այն կարծիքն է հայտնել, թե նրա հայոց հին գրականության պատմությունը «նոր դարագուփի բացեց մեր հին մատենագրության ուսումնասիրության և արծարծվելու գործում», թե այդ հատորը «եղել է ուսուցիչ բոլոր նրանց, որոնք զբաղվել են հայոց հին մատենագրությամբ...» և Զարբհանալյանի «Հիշատակը, իրու երախտավորի, անմոռաց կմնա այս գիտությունների պատմության մեջ»:

Հայոց հին ու նոր գրականության զարգացման հարցերի հետ են կապվում խոշոր գիտնականի նաև այնպիսի գործեր, ինչպիսիք են «Հայկական մատենագիտությունը», որը տալիս է 1565-ից մինչև 1883 թվականը լույս տեսած հայերեն հրատարակությունների այբբենական ցուցակը (Վենետիկ, 1883, 734 էջ), «Մատենադարան հայկական թարգմանության նախնյաց» (Վենետիկ, 1883, 783 էջ), «Պատմություն հայկական տպագրության» (Վենետիկ, 1895, 284 էջ), «Ուսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության հարևմուտս» (Վենետիկ, 1895, 402 էջ):

Այժմ տեսնենք, թե ինչ տեղ է գրավում Զարբհանալյանը հայ շերպսպիրագիտական պատմության մեջ:

Ենքսպիրը զբաղեցրել է գրականագետին ավելի քան երկու տասնամյակ՝ 1853-ից մինչև 1874 թվականը: Մեր իրականության մեջ վաստակավոր գրականագետը միակն է, որ ժամանակին այդպիս հետևողականորեն արծարծել է Ենքսպիրի կյանքի ու ստեղծագործության խընդիրները: Նա մեծ անզիփացու հետ առնչվում է երկու առանձին, ժամանակի համար շատ ուշագրավ հոդվածով, արևմտաեվրոպական գրականության պատմության իր հեղինակած գրքի շուրջ երեսուն էջով: Կա նաև մի շորորդ աղբյուր, բազմից, գրեթե երկու տասնյակ անգամ, գրական այս ու այն հարցը շոշափելիս, նա վկայաբերում է Ենքսպիրին: Իր այնքան մեծարած նասինին ու Միլտոնին առանձին հատվածներ հատկացնելուց հետո հեղինակն այլևս ոչ մի առիթով չի անդրադառնում նրանց, իսկ Ենքսպիրին դիմում է շատ հաճախ: Եվ այն էլ ինչիպիսի՞ս քանչացումով և նրա մեծության խորունկ գիտակցությամբ:

Զարբհանալյանն առաջին հայ հեղինակներից է, որ գիտականորեն զբաղվել է Ենքսպիրով: Նա է, որ տակավին 1853 թվականին առաջին անգամ ընդգծել է Ենքսպիրին գիտականորեն՝ «Հավատարմությամբ», այսինքն «ուսանավորը՝ ուսանավոր և արծակ մասերն ալ» արծակ թարգ-

մաներու կարևորությունը: Այդ կերպ միայն «Հնդինակի ոգին, բանաժողովն ավելի լավ կը ըստան իմանալ ընթերցազրք»: Այս պահանջի նշանակությունն ավելի պարզ կլինի, եթե ասենք, որ առանձին թարգմանիչներ այն աստիճան կարևորություն չեն տալիս շեխսպիրյան երկերի գեղարվեստական յուրահատկությունների պահպանմանը, որ չափածո ամբողջ պիեսներ արձակ էին թարգմանում: Այսպես, Ա. Կ. Տեսելյանը 1866-ին, Զյուսնիայում, ճիշտ է, բնագրից, բայց արձակ թարգմանել էր «Հոռմատելի ճակատագրան»:

Շեխսպիրյան երկերը հմտորին և հարազատորին թարգմանելու միտքը Զարբհանալյանի համար ունեցել է առաջնահերթ կարևորություն: «Բազմավիճպի» Հոդվածից երկու տասնամյակ անց, կրկին արծարծելով Շեխսպիրին պատշաճորեն թարգմանելու խնդիրը, բանասերն ասում է, որ նրան երեսն մատուցում են «անհատուկ թարգմանություններով և հապավմամբ կամ հավելվածով»: Շեխսպիրին թարգմանել հարազատորին, իրեն վայել արվեստով՝ այս հարցն է առաջարկում հեղինակը:

Զարբհանալյանի վաստակը ունի և մի ուրիշ կարևոր արժանիք. նա «Համլետի» շատ կտորներ թարգմանել է աշխարհարար: Այս հանգամանքը ևս ոչ մի տեղ չի նշված: «Համլետի» հայերեն թարգմանության պատմության մեջ ևս նա ունի իր տեղը:

Անցնենք Զարբհանալյանի շեխսպիրագիտական ուսումնասիրություններին՝ հետեւով պատմական հաջորդականությանը, քանի որ դա ցույց է տալիս նաև նրա զարգացումն իրրե գրականագետի և շեխսպիրագիտի:

1853-ի մարտին Զարբհանալյանը, երր տավակին 26 տարեկան էր և զրույն էր հունա-հոռոմեական գրականության պատմությունը, որ լույս ընծայեց երեք տարի անց, այն ժամանակիա երկշաբաթերթ «Բազմավեպում» տպագրում է «Գովիխելմոս Շեյքսպիր» անունով բավական ծավալուն, հմտալից մի ուսումնասիրություն առանց ստորագրության: Ասենք, որ ընդհանրապես ժամանակի սովորություն էր անստորագրագրագրել նույնիսկ բանաստեղծություններ, բառարաններ...

Ո՞վ է Շեխսպիրն ըստ Հոդվածագրի: «Անդիիո թատրերգության հայրն ու հիմունքը, որի զորավոր ու բյուրաբեղուն հանձարույն ինչվան հիմա զուգակից մը շկրցավ հանել Անդրիա»: Շեխսպիրը ներկայացնում է մի ամբողջ ազգի գրականություն և թատրոն. «Անոր համար մենք ալ անդիացվոց թատրերգության վրա խոսելով, բավական կսեպենք միայն Շեյքսպիրի վրա տեղեկություն տալը», — հարում է բանասերը:

Ասես ժամանակի մտայնությանը շհակադրվելու համար, Զարբհանալյանը սկզբում անգերազանց հանճարներ է համարում «Քոռոնելլին և Ռասինին», սակայն վերլուծությունների միջոցին պատշաճն է հատուցում անգիտացուն՝ նա է բովանդակ մարդկության երկրորդ հանճարեղ գրողը Հոմերոսից հետո:

Եեքսպիրի կենսագրությունը շարադրելուց հետո, Զարբհանալյանն ասում է. «Գանք հիմա իր թատրերգությանցը»: Խոսքին ավելի կշիռ տալու համար մեջ է բերում այն կարծիքը, որ «իրավամբ» հայտնում է «երեվելի գաղիքացի մը. Եեյքսրի այնպիսի զարմանալի թատրերգական հանձար մը ուներ, որ կարծես թե բնության մեջ որչափ որ վսեմ ու մեծ բաներ կան, իր գլուխ ժողվեր էր»: Եեքսպիրի մեծության հիմքերից մեկը Զարբհանալյանը համարում է այնպիսի ոճը, որ հաճելի է նաև ուամիկին, որով և հեղինակը ավելի օգտակար է լինում: Եատ ուշագրավ միտք, որ երևույթ էր ժամանակին:

Պատմականության լույսի տակ դիտելով Եեքսպիրի երկերը, հոդվածագիրը շարունակում է. «Իսկ թե որ ժամանակին ալ նայելու ըլլանք, Եեյքսրի հինգությանը աշվենիս մեկեն կառնե»: Նա շի ունեցել զորավոր նախորդներ: Նա կատակերգության ու ողբերգության ասպարեզում անմեռ արժեքներ է կերտել «իրեն հանճարույն միայն ապավինած»:

Եեքսպիրի հայ մեկնաբանը գիտե, որ հանճարեղ թատերագիրը չի պահպանել ժամանակի, տեղի և գործողության միասնության կանոնները, և տալիս է հարցի ուրույն բացարությունը: Վնասե՞լ է րազյոք այդ հանգամանքը Եեքսպիրին: Բնավ: Նա շի իմացել երեք կանոնները, բայց հանճարեղորեն իմացել ու կիրառել է երկու օրենք՝ թեմի վրա կերպարները կենդանացնելու և նրանցով հանդիսականների վրա զորեղապես ազգելու կանոնները: Զգիտնալը՝ զգիտնալ, «բայց երբոր մեյ մը իր գրիշն ձեռքն առնե, ան ատեն ա'լ կարծես թե մարդուս բնութենեն դուրս կելլե. անանկ վեհ դյուցազներ՝ դիմացնիս կրերե, որ ուրիշ ամեն բան մոռցնել կուտա մարդուա»: Եեքսպիրի հանճարը տարերային է, ինքնարութ. «Կիրքերը առանց արվեստականության դուրս ցատկեցնելու մեջ միմիայն է, թե գորովու ըլլա և թե բուռն կիրքեր»: Վկայաբերելով դարձյալ մեկին, փորձում է հիմնավորել, թե ինչու Եեքսպիրի ստեղծագործությունները «այսշափ երկայն ատենվան մեջ ալ դեռ հավասարապես հաճո անցած են ամենուն», մահվանից «ինչվան այսօրվան օրս իր երկասիրությունները կը հրատարակվին մեծամեծ գովեստներով»: Պատճառը զգաց-

* Այսինքն՝ հերոսներ:

մունքների աղնվաթյանն է, որով առգրաված են նրա գրվածքները: Եթե «ուրիշ ամեն ողբերգակներուն» դիմանք այս լուսի տակ, ապա նրանք Շեքսպիրին «չեն հասնիր»: Ուրիմն Շեքսպիրը գերազանցում է «ամեն ողբերգակներուն», որոնց մեջ ենթադրվում են, ինչ խոսք, նաև Կոռնելն ու Ռասինը:

«Կիրքերը առանց արվեստականության», այսինքն ուսալիստորեն պատկերելուն մի անգամ ևս Զարրհանալյանը անդրադառնում է Հոգվածի վերջում, բայց տալիս է ավելի առարկայական սահմանում՝ կամ ձևակերպում. «... Իր ամեննեն ավելի մեծ ձիրքը, որով Ելյուացի գրեթե ամեն թատրերգական հանճարները կգերազանցե, մարդկացին բարոց ամենասրանը նկարագրությունն է, որով զմարդ, ինչպես որ է իրոք, անանկ կձեւացնեա»:

Շեքսպիրը մեծ է նաև կատակերգությունների մեջ: Նրա կատակերգություններում էլ «զորագոր, ստեղծիչ ու բեգնավոր հանճար մը կիմալիք. և ինչպես որ ողբերգությանց համար ըստինք, ասոնց մեջ ալ բնավորությանց նկարագրությունը շատ լավ կընեա»:

Այդ բոլորով է նաև «մեծահանճար բերթուղար», որին ունին և գաղափարախոսությանը՝ «ըսնած կիրապին» ընթերցողներին մի որոշ գաղափար տալու համար բարվոր է համարում «Հուլիոս Կեսար» ողբերգությունից «ամբողջ մեկ հատված մը հավատարիմ թարգմանությամբ» հրապարակել մի ուրիշ անգամ:

Անցնում է հանգեսի ուղիղ հինգ համար, այսինքն երկու և կես ամիս և առաջ 1853-ի Հունիսի 1-ին «Բանաստեղծություն» բաժնում տեղ է տրվում «Հուլիոս Կեսար» երրորդ գործողության Բ տեսիլին զրաբարթարգմանությամբ (էջ 164—168):

Թարգմանությունն ունի նախորդ Հողվածի առաքում՝ «տես երես Ց1»: Ունի նաև փոքրիկ նախարարն, որը ներկայացնում է պիեսի բովանդակությունը՝ հիշյալ հատվածը ամբողջի մեջ առավել լավ հասկանալու համար: Հողվածագրի շեշտված դրական վերաբերմունքը կա գեալի «արքայասպանությունը»: Եթե նախորդ Հողվածից միայն առանձին մտքեր են տեղ գտնում հետազայում հրապարակ եկող երկհատորյակի մեջ, ապա այս փոքրիկ Հողվածի բոլոր մտքերը, ամբողջ նախադասություններ, առանց բառ իսկ փոխելու, անցնում են երհատորյակի:

Ի՞նչ մտքեր են դրանք: Ի՞նչ կերպ է ընկալում գրականագետը Շեքսպիրին: Արդյոք ընդունում է «տիրասպանությունը», հանուն հայրենիքի ազատության ամեն ինչ զո՞աբերելու գաղափարը:

Այսուհետեւ նվազագույն միաժամկետ մի հեղինակի մասին, դրվա-
տում է նրա այն գրվածքները, որնք պատկերում են ժամանակի ոգին,
ցուց են տալիս, թե ոռովիսի ոք էր կուդովիկոս ԺԴ, ու իր արքունիքը, և
թե ինչպես բազմապատիկ փառաց ու մեծության հետ խառնված էին նաև
ալլեալ զեղծմունք, զորս թագավորական ծիրանին կծածկեր, կամ կար-
դարացներ» (Արևմտակլրոպական գրակ. պատմութ., Բ հատոր, էջ 290):
Շիլերի «Վիլհելմ Տելլ» վերլուծելիս շեշտում է «բռնավորին կենաց դեմ
մտածված և ի գործ դրված դավադրությունը» (նույն տեղում, էջ 457):
Բայրոնի սիրանքն էլ չերմությամբ է գնահատում: Նա մահանում է «ի
Միսոլունկի, ուր գացեր էր Պա՛յրը ազատության պատճառավ ուրք ելլող
հունաց օգնելու համար» (նույն տեղում, էջ 507):

Եթե եռմիասնությունը շպահանելու համար գրականագետը թեթև
կշտամբում է Շեֆսպիրին, ապա «Հուլիս Կեսարի» արժեքավորման հար-
ցում լիովին համամիտ է ժողովրդի ազատության երգչի հետ. բռնակալլ
պիտի սպանվի, օրհնյալ է այդպիսի սպանությունը: Ով էլ լինի, ինչպիսի
ծառայություններ էլ մատուցի հայրենիքին, եթե նա փորձում է ձեռք
բարձրացնել հայրենյաց ազատության վրա, պիտի ոչնչացվի. լավ է մե-
կը ոշնչացվի, քան թե այդ մեկը բոլորին սարուկ դարձնի:

Կեսարը, ասում է գրականագետը այդ կուռ հոդվածում, մեծամեծ
քաջադրություններով փառավորում է հոռվմայեցվող իշխանությունը:
Սակայն «գոռ» շրլլալով հասարակապետության իշխանությամբը, ուզում
է թագավորությունը վերականգնելլ Թագավորությունը «Փողովրդյան
ատելի բան մըն էր»: Կեսարը դիմում է քաղաքական խաղի. ծերակուլ-
տից ոմանք, տարված կեսարի «առատածեռն պարզեներով» և իրենց
«մեծամեծ ակնկալություններով», դավադրի կողմն են բռնում: Սրանց
գլխավորում է «Մարկոս Անտոնիոս հյուպատոսուր»: Դավադիրների գել
մի ամբողջ բանակ կա ազատասերների: Սրանք «ազատության սիրով
վառված, կուգեին գկեսար մեռցնել. ասոնց գլուխ կեցավ թրուտոս, որ
թեպետ կեսարու մեծ սիրելին էր ու անհարազատ որդին, բայց սակայն
հայրենյաց սերը ավելի մեծ սեպելով, միացավ իրեն նման ազատասի-
րաց հետ զկեսարը դավաճանելուա: Մի հարմար ժամի, երբ կեսարը եկավ
«ծերակուտի հետ խորհրդի նստելու», հանկարծակի հարձակվեցին նրա
վրա շորս կողմից և «զինքը զարկին ու սպանեցին»:

Ապա թարգմանաբար տրվում է այն «Հուչակավոր ու գեղեցիկ հատ-
վածք», երբ «Թրուտոս կուգա ժողովրդյան կիմացնե կեսարու մահը»:
Այդուեղ է, որ թրուտոսն ասում է, թե ինքը կեսարի բարեկամն էր, ոչ

որից պակաս չափով չէր սիրում նրան, բայց ևս, ասում է Բրուտոսը, Հռոմն էի նրանից առավել սիրում օթե Կեսարը մնար, ամենքո պիտի իրեն գերի մեռնեինք, իսկ եթե Կեսարը մեռներ, ամենքո ազատություն կվայելեինք (տես վերտիշշալ գրքի Ա. Հասորի 319 էջը և 1853 թ. «Բազմավեպի» 164 էջը):

Ինչ խոսք, Լուգովիկոս XIV-ի ծիրանին անգունողը, ազատության մարտիկ Բայրոնի վարքագիծը զրաբառողը պատահականորեն չէր ընտրել Հիւյալ հասավածքի Ազատության շամանը 19-րդ դարում այնքան էր զորեցացել, որ խաղում էր նաև Միսիթարյան միարանության փոքրիկ կրզու վրա Բնորոշ է, որ Եկրոպիրին նվիրված իր ամենածավալուն՝ Երրորդ գործում ԶարբՀանալյանը դարձյալ, բացի «Հուլիս Կեսարից», դիմում է Համեմարեղ գրողի մի այնպիսի հոյակապ թատերախաղի, որի մեջ նույնական այնքան փայլուն կերպով երեան են գալիս մի կողմից այնպիսի «ապհայլ զեղծմունք, զորս թագավորական ծիրանին կծածկեր կամ կարդացներ» և մյուս կողմից՝ մի յուրօրինակ Վիլհելմ Տել՝ ազատության իմաստասեր և մարտիկ Համեմարտ:

Խոսներ այս մասին:

Բայց որովհետեւ անցել է շուրջ մեկ դար, և դիրքն էլ հապվագյուտ րան է դարձել, ավելորդ շենք համարում մի քանի ձևական հանգամանքներ շարադրել՝ ի տեղեկություն ընթերցողների:

Գրականության պատմության Ա. Հասորի էապես Եկրոպիրին նվիրված գրուքը բռնում է 36 մանրատառ էջ և կոչվում է «Անգղիական մատենագրություն»: Բնդգրիում է ԺԶ—ԺԷ դարերը: Ուշագրավ է զմի ներքին բաժանումը: Հեղինակը այդ երկու դարից վերցրել է երեք գրողի՝ Քրիստոն Մաուլոյին (ինքը գրում է Մարլու), Բեն Ջոնսոնին (ինքը գրում է Բենիամին Շոնոն) և Եկրոպիրին: Նախ բավական հանգամանորեն գծում է ժամանակի գրական պատկերը, խոսում թատրոնի ու թատերական բանաստեղծության մասին:

Աշխատության մեջ հետազոտող զիսի 36 էջից շուրջ տասը ներածականն է: Ապա զալիս են Եկրոպիրի նախորդները՝ Քրիստոնակոր Մաոլոյն (1564—1596) և Բեն Ջոնսոնը (1574—1637): Կանգ է առնում Մաոլոյի «Ֆառուստի» վերլուծության վրա, սակայն նրա զիսավոր արժանիքը համարում է այն, որ նա բացեց պատմական ողբերգությունների ճանապարհը, որով ընթանալիս «այնպիսի փառքով Եկրոպիրի նման անձ մը պիտի անմահանար»: Մաոլոյին նվիրում է երեք էջ: Նույնըան էլ հատկացնում է Ջոնսոնին, որը «խիստ շափակոր էր ողբերգության մեջ, շատ

ավելի նշանավոր երեցավ ի կատակերգականին»: Այս ասպարեզում էլ նա կատարելություն չէ, ոմի թերություններ, «զորս ոչ այնչափ իրեն, որը ապրած ժամանակին հատուկ սեպելու է»: Իսկ ո՞րն է Զոնսոնի պատմական ժառայությունը. «Իր գլխավոր արդյունքը անոր մեջ է, որ իրմեն ետքը երևող կատարելագույն քերթողաց և մանավանդ Շեքսպիրին առաջնորդ եղած է»: Զոնսոնին նույնպես Զարբհանալյանը հատկացնում է Մարլոյի շափ տեղ (300—302 էջերը):

Եվ այսպիսի նախապատրաստությունից հետո միայն, որի առաջին մասը ժամանակի թատերական պատկերն է, իսկ երկրորդը՝ անմահ անգիտացուն նախորդող թատերագրությունը, անցնում է բուն Շեքսպիրին (302—321 էջերը):

Բավական հանգամանորեն շարադրում է Շեքսպիրի կենսագրականը՝ ծննդից մինչև կյանքի մանրամասները, կոնդոն մեկնելը, ապա այնտեղ անցկացրած տարիները՝ իրենց բնորոշ գրական, գերասանական ու կենցաղային իրադարձություններով: Վերադարձը հայրենի քաղաք, ինչպես լոնդոնում, այնպես էլ այստեղ՝ առասպելական մարդասիրությունն, ու համեստությունը: Մահը և թաղումը: Երբ մեռնում է մեծ քերթողը, «ոչ ոք զգաց այնպիսի հանճարու մը անդարման կորուստը. ոչ ոք ի քերթողաց անոր շիրմին վրա գովության խոսք մը զրուցեց կամ ծաղկե պսակ մի դրավ: Անանկ անձի մը սուզն ու ցավը միայն իր ընտանյացը մեջ ամփոփված մնաց: Եվ ոչ ինքն իսկ Շեքսպիր հույս մը ուներ ապագայի վրա. իրեն կերևա թե աշխարհիս վրա ունեցածը անզարդ գերեզման մը պիտի ըլլա»:

Սակայն հանճարի մահվանից յոթ տարի անց «Իր թատեր ընկերակից երկու գերասաններ՝ Հեմիննս և Գրնտելը Շեքսպիրի ողբերգությունների, կատակերգությունների և պատմական մանր գրվածքների առաջին հրատարակությամբ անմահացնում են «անոր հիշատակը»: Եվ հրատարակիչներն իրենք չեն զգում, որ մի օր ոչ միայն Անգլիան, այլև «Ամենայն ելրուպեն» պիտի երախտապարտ լինեին իրենց:

Այսպես ու այսքանով ամփոփում է բանասերը Շեքսպիրի կենսագրականը և անցնում նախ մեծ դրամատուրգի ստեղծագործությունների ընդհանուր բնորոշմանը, ապա և «Համլետի» մանրամասն շարադրմանն ու քննարկմանը, որ անում է բավական երկար մեջբերումներով: Ամենավերջում տալիս է «Հուկոս Կեսարի» սեղմ վերլուծությունը՝ դարձյալ զգալի մեջբերումներով: (Այս մեջբերումները և վերլուծությունը 1853 թվականի «Բագմավեպից» են վերատպված):

«Համբեաթից» կատարված մեջբերումները արված են աշխարհաբար, բացառությամբ մեկ-երկու գրարար փոքրիկ նմուշների:

Եկրապիրի սեեղծագործության արժեքավորումը Զարբհանալլանը սկսում է այն հարցի պատասխանով, թի Եկրապիրը մահացավ, խաղընկերները հրատարակեցին նրա երկերը, ախտամինայիլ ի՞նչ բախտի արժանացան այդ երկերու:

Սկզբեց նրանց տարածումը աշխարհով մեկն Ասես գոյացավ մարդկության համար մի նոր երկինք տիեզերում, որի նորածագ աստղերը երրեք չեին խամբելու, այլ, ինչպես այժմ են անում շատ զիանականներ աստղերի նորանոր, անհշմար լույսերն ու պայծառությունները, դրանց ակոնքները հայտնաբերելով, այդպիս էլ քաղաքակիրթ բոլոր երկրներամ բանասերներն ու դրականագետները, թարգմանիչներն ու լեզվաբանները, գերասաններն ու մեկնաբանները շարունակ դանելու էին և գտնում են այդ կենսատու երկերի լույսի ու պայծառության նորանոր ակոնքներ ու աղբյուրներ:

Եկրապիրի մահվանից, նրա միհատորյակի հրատարակությունից հետո սկսվեց իր և իր երկերի անմահությունը, Եկրապիրը դուրս եկալ Անդիխայից, որը ժամանակին շասեացավ նրան, մտավ աշխարհ, ուր, քիչ բացառությամբ, համատարած ընդունելություն գտավ: Անդիխային էլ նոր հայացքով նայեց իր գրողին և հասկացավ նրա հանճարը, սիրեց ու փայտայեց նրան:

Մեջբերենք, հիրավի արժե ամբողջությամբ մեջբերել, Զարբհանալլայնի՝ «Եկրսրիրի հանճարույն վրա համառոտ տեսությունը», քանի որ այդ տեսությունը վերին աստիճանի հետաքրքրական է՝ իբրև մի դար առաջ Եկրապիրի մասին ասված զիտական ճշմարիտ և գունեղ խոսք.

«Ուր որ հասան Եկրսրիրի թատերական զրվածները, ինչվան երբեմն անհատուկ թարգմանություններով և հապավմամբ կամ հավելվուծով, ամեն աեղ հոչակիցեցավ ու մեծարվեցավ իր գերազույն հանճարը, և անդիխայի բազմաթիվ և ընտիր մատենագրաց մեջ իբրև հսկա մը երևեցավ Եկրսրիր, զարմանալի ու աննման իր հանճարովը և մտաց արգասավորությամբը: Հոմերոսն ետքը երեցած բերթողաց մեջ թերեւս ամենեն ավելի արժանավոր ազգային բանաստեղծի մականունը կրելու. և անոր պես ընդհանրապես զարմացված ու զգածված ամեն օտար ժողովուրդներն. վասն զի ամեն ժամանակաց և ամեն երկրի մարդիկ կհանչըցվին և կդտնվին այն բնավորությանց մեջ, զոր տված են իրենց ներկայացված անձանցը, ու անոնց այլեալ, բայց ճշգրիտ բարուց նկարա-

գրության մեջ բոլոր մարդկությունը անձնավորել կուտան: Իր նկարներուն ուշից և գույներուն կենդանությունը այն աստիճանի է, որ անոնց պատրանքը ճշմարտութենեն հեռու չմնար: Ամեն անձ իրեն հատուկ ու մասնավոր բնավորություն մը ունի, որ կարգե գուրս տպավորություն մը ընելով մեր սրտին վրա, անկարելի կըլլա շփոթել զինքն ուրիշի մը հետ: Կճանշնանք ու կտեսնենք դինքը: Թե խոսելու ըլլա և թե գործե, միշտ նույնն է: և այնպես ձիշտ, որ անկարելի կըլլա ուրիշ կերպով նկատել զինքը: Ասիկա է Շեյքսպիրի գլխավոր արդյունքը, և որուն չէին կըրցած հասնիլ իրմէ առաջ եղող քերթողք: Վասն զի ինքը միայն հաջողեցավ շէ թե միայն ձևացնել ու կերպավորել իր մեջ բերած անձինքը, այլ նաև կարծես թե հոգի մը տալ անոնց: Բուն և ճշմարիտ հանճար ունեցող անձանց հատուկ է այսպիսի կերպով տեսնել, զգալ և նկարագրել զբնություն*:

Եվ հիրավի, դժվարին պիտի ըլլա գտնել քերթող մը այնպիսի թատերական անձինք ներկայացնող, որպիսիք ոմանք են խանդակաթն Ռոմեո, տիրազգածն Համլետ, թշվառ թագավոր Լեար, փառասերն Մեքպըթ, նախանձահույզն Օթելլո և քաղաքագետն Հոփիարտ Գ: Այս նկարագիրներեն ոմանք բուն պատմական են, այլք՝ հին ավանդներեն փոխ առնված, ոմանք առասպելախառն և ուրիշներն ալ իրմեն առաջ թատերական քերթողաց հետևողություն: Բայց հիմա ամենքն ալ Շեյքսպիրի կպատկանին: Սակայն ամենեն ավելի հատուկ է իրեն այն շնորհքը, փափկությունն ու մեծավայելլությունը, զոր մեջ բերած գեղեցիկ սեռին կուտա: Այս ամեն հատկություններն անով ավելի զգալի ու զարմանքի նյութ կըլլան, եթե քերթողին ժամանակը նկատենք: Վասն զի իր քնարը բարբարոսության դեպ ի քաղաքակրթություն անցքն է: Ո՞րշափ քաղցր ու խանդաղատական է Զուլիետ, որ իր պարզությանը մեջ շկրնար հավտալ, թե ի՞նչպես սերը կրնա հանցանք ըլլալ, և սիրուն զմայլմանը մեջ շրկրնար լսել ներքին ձայնին, որ կվկայե, թե հարսանեկան առագաստը իրեն գերեզմանը պիտի ըլլա: Ո՞ր գտեր է զՄիրանդա, որ ծվայի ու Կալագեայի մը նման, սովոր և ողջախոռ սիրո մը ազդեցությամբն, նոր կյանք մը կզգենու, և շնորհաց, աղնվության և բարության սակավագյուտ գանձերն իր վրա կմիացնե: Եթե Սոփոկլի Անտիգոնեն ազգած է Շեյքսպիրի զգարմանալին Կորտելիա, որ իր գեղեցիկ անձնանվիրությամբն շզարհուրիր ու հարհամարհանաց, ոչ մի ծախորդութենե կամ հաղետից և հապաշնորհութենե, ուսկի՞ց առած է այնչափ նորանոր բարուց առաջին գաղափարը,

* Խառնվածք: բնավորություն:

ինչպես են Տեսմողեն, Խմողեն, Եսոփա, Օֆելի, Զդանդաղինք բսել, թե միայն Շերսրիք սրանն ինքն իսկ քերթողն կխռուտվանի, թե որշափ զգացն և զյուրազգած եղած է առ սեր, և այն ամեն շնորհըն ու առաքին թյուններն զորս նկատեր կամ Հերազեր էր երկրիս վրա, կիսխազրեին զինքը այն տեսարանին վրա, զոր կուզեր ներկարացնել, նման այն նկարչին, որ պատառի վրա կուզե անցընել իր սրախն մեջ զրոշմված ու միշտ աշքին դիմացն կննդանի եղող առարկաները Որշափ զորավոր է ապավորությունը, այնշափ ալ կենդանի ու ճշգրտանման իր պատկերը:

Բարտոց նկարազրեն զատ, զարմանալի են ի Շերսրիք մտածությունը և բացարարությունն իր գրչին տակ հինցած ու սովորական մտածությունն մը բացարարության կերպով այնպես կատագանա ու կազնվանա, որ բոլորովին նոր ու բանաստեղծական զուրցվածքի մը կերպարանը կառնու...

Շերսրիքի հանձարը այնայլ աստիճանով կերենա իր հորինած թարերգությանցը մեջ, որոնք բնդ ողբերգությունն և բնդ կատակերգությունն երեսունեվեց են թվով: Անոնց ամենուն մեջն ալ առաջին կարգի գեղեցկությունը կնշանավինքն...» (Արևմտահեվրոպական գրականության պատմության, Հատ. Ա, էջ 307—308):

Այս տեսությունից հետո, որ Շերսրիքի ընդգրկումների կենդանաշունչ և ինքնատիպ մեկնարանությունն է, զրականագետը զիմում է կոնկրետ օրինակի: Ասածը ուզում է համոզիլ դարձնել օրինակով. «այս համառոտ տեսությունն ընկենա եաքը մեր ընթերցողաց աշքին առջն գնենք իր զրագածքներն մեկը, հորում ամեննեն ավելի ցըցուցած է իր մտաց տարօրինակ մեծությունը, այսինքն Համլիքի ողբերգությունը»:

Միջնդմեջ շարազրելով պիեսի բովանդակությունը և շարադրանը վերլուծությունը տալով, ընդունին ակնդես հետեւելով Համլետի հոգու ելեէներին, Զարբանալյանը խոսքն ամփոփում է այսպիսի եղակակացությամբ Շերսրիքի մասին. «...Գրեթե առանց փնտրելու, թատերական զարմանալի արդյունքներ և տեսարաններ իր գրչեն կելլեին իր կարգն ուրիս և իսկատիպ հանձարույն արդյամբը»:

Այստեղ, ուր ոմանք տեսնում էին լոկ վանողն ու ահաճը, Զարբանալյանը հանձարի արվեստ է նկատում: «Ո՞վ կրնա, — գրել է մեկը, — կոշկակարներու, գերձակներու, դիաբազներու և խառնիճաղանձին մեջն ամեննեն ստորին մարդիկներուն խոսած ու ուամկական խոսքերը հաճությամբ մտիկ ընել ու իրենց խաղերը առանց զգվելու տեսնելու: Գիտնականը «Համլետի» վերլուծության մեջ ուղղակի պատասխանում է այս տո-

զերի հեղինակին: Թեև, հարկ է ասել, առանց իր միտքը ընդարձակորեն բացելու. «Այն օրն, հորում օրիորդի հուղարկավորությունը կկատարվի, Համլի կղանա ու գերեզմանատուննեն անցնելով կտեսնե գերեզման փորողները ու անոնց հետ կխոսի: Հո՞ն է Շեյքսպիրի ներկայացուցած փիլիսոփայական տեսարանը, որուն համար շատերեն մեղադրված է, և սակայն մարդու սիրաց մեծամեծ ու գեղեցիկ մտածությամբը կլեցնե»:

«Համլիտին» հաջորդում է «Հուլիոս Կիսարի» սեղմ վերլուծականը, որի մասին նշեցինք, և որով ավարտվում է գրքի այս վլուխը:

Զարբհանալլանը Շեքսպիրին շարունակ զգում է իր կողքին. Հեղինակներին վերլուծելիս հաճախ է վկայաբերում նրան, մի հանգամանք, որ չի անում ուրիշ ոչ մեկի նկատմամբ: Դրանով նույնպես գրականագեաը ցուց է տալիս իր անսահման սերը հանճարեղ անգլիացու հանդեպ:

Թերենք այդպիսի վկայակոչումներից մի քանիսը հիշյալ գրքի Բ հատորից:

«Շեյքսպիր ... հավասար խառնած է իր ողբերգությանցը մեջ վսեմն ու ծիծաղաշարժը, վասն զի կուզեր հաճոյանալ իր ունկնդրացը»:

Շեքսպիրի ժամանակ երեսն եկած հեղինակների մեջ ռնշանավոր է Սփենսըրը, Շեյքսպիրի ժամանակակիցը: Որչափ ալ այս վերջինս իր գեղեցիկ ու աննման հանճարովը բավական է ամբողջ դարու մը գրավորական պարծանքը կազմելու, նույնը չենք կրնար զրուցել իր ժամանակակից Սփենսըրի համար, թեպետ և իր դարում մարդիկ Համլեթը ողբերգութեն վեր կսեպեին զինքը: Բայց եթե Սփենսըր իր ժամանակին զարմանքն եղած է, Շեյքսպիր՝ ամեն դարու և ազգաց»:

Սպենսերին (1553—1598) թաղում են Վեստմինստերի արքայարանում և մահարձանի վրա լատիներեն քանդակում, «Անգլիական բանաստեղծությունը, որ իրմով կյանք ստացած է, կվախնա անոր հետ մեկտեղ մեռնելին»: Սպենսերի մահվան ժամանակ կենդանի էր Շեքսպիրը: Զարբհանալլանը, բերելով այս տողերը, հարում է. «Ավելորդ է ըսել, թե տարածամ էր այն երկյուղը, մինչդեռ ևս կենդանի էր Շեյքսպիր»:

Շեքսպիրը դառնում է ուսուցիչ, տիպար մեծարվեստ թատերագրության:

Շեքսպիրի մահվանից հետո նրա հայրենիքում մի ժամանակ տիրում են օտար հեղինակների գրվածքները, բայց արմատը և ճշմարիտ ձանապարհը միայն ազգային մեծ պարծանք Շեքսպիրն էր.

«Գոռնելլի, Մոլիերի ու Ռասինի համբավը այնչափ մեծ հոչակ մը ունեցավ հԱնգլիա, որ կարծես թե մոռցնել տվակ իրենց զանմահն Շեյ-

քրսրիր. և շատ հանգղիացի քերթողաց սկսան նմանիլ առաջիններուն, դպրաւովելով իրենց ազգային մեծ մատենագրին ցուցցած համփեն: Այս նմանողությունը խիստ անհաջող ու անկատար կերպով ըլլարուն, գաղփական ախորժակը չկրցավ հաստատուն տեսականության արժատ մը ձգել ի Բրիտանիա»:

Եիլերը նույնապես տակավին պատանի հասակից սովորում է Շեքսպիրից. «Ապրուսափ համար կարեոր միջոցներն զուրկ, թագավորի ծախքովը դաստիարակվեցավ, որ կուզեր զինքը բանակի վիրաբույժ ըներ, որից զրավորական պարագմոնն խստիվ արգելելով. Շեքսպիրի քերթվածոց օրինակ մը ուներ, և զիշերաց մեծ մասը անոր ընթերցմանը կծագ խեր Եիլեր»:

Եիլերը «եսաննուն աշակերտ մըն է Շեքսպիրից: Իոկ ինչո՞վ է աչքի ընկել Եիլերը, որ գարձել է եռանգուն աշակերտը Շեքսպիրի: — Եիլերը իր ստեղծագործություններով զորովալիր և մեր համակրությունն զրավող մի սիրտ է: Ուրեմն և այդպիսին է շատ ավելի մեծ շափով Շեքսպիրը՝ զորովալիր և մեր սրտի հետ խոսող:

«Հովհաննես Պալլի՝ առաջին կարգի քերթող մը սեպված է իր համազգի բանասերներեն. և հորինած բանի մը թատերախաղուց համար իր սերին Շեքսպիրը սեպված է»:

Ամփոփենք. ինչպես որ Զարբհանալյան ինքն է գրել Շեքսպիրի մասին, թե զրիշն ձեռքն առնելիս «կարծես մարդու բնութենն դուրս կելլիք, անանի վեհ զյուցազներ դիմացնիս կրերե, որ ուրիշ ամեն բան մոռցնել կուտա մարդուս», այդպես էլ բանասերն է Շեքսպիրի մասին խոսելիս մարդկային ամենազոր բնության թելազրանքով մոռանում պայմանական եռմիանությունը: Մեջտեղը մնում են Շեքսպիրի գործերն ու ինքը: Զարբհանալյանի խոսքը դառնում է անմիշական, հստակ ու գունեղ, վերլուծությունները՝ ինքնուրույն ու չերմ: Շեքսպիրի շունչը համակել է նաև հայ գրականագետին, որը տալիս է Շեքսպիրի անմահ նրկերի ճշմարիտ վերլուծությունը, նրան համարելով աշխարհիս երկրորդ գրողը Հոմերոսից հետո և աշխարհիս առաջին թատերագիրը: